

ՍԱԼՆՋԱԽ ԵՄ ՉԳԵՐ

ՄԱՐԻՈՒՄ ՄԻՆԱՍՅԱՆ

♩. = 32

Սա - լըն - ջախ եմ ձը - գեր սա - լո - թին ծա - ոը.

կու - լար ու ծուռ կու - գար գա - ոա - նըս մա - ըը.

է՛յ. յավ-րում է՛յ. օր - անդ օս - կով պի - տեր

կա - մարդ ար - ծա - թով. օ - թոս-կա - պրդ պի - տեր

սըր - մա թե - լե - թով. է՛յ, յավ - րում. է՛յ...

Սալընջախ եմ ձգեր սալորին ծառը,

կու լար ու ծուռ կու գար գառանրս մարը,

է՛յ, յավրում, է՛յ...

Օրանդ օսկով պիտեր, կամարդ՝ արծաթով,

5 Օրոսկապրդ պիտեր սըրմա թեկերով,

է՛յ, յավրում, է՛յ...

Օրոր, օրոր, օրոր, օրոր՝ փարայով,

Սըրտիկըս լեցեր է խոցով, յարայով.

2 Գառանրս—գառնուկիս:

5 Պիտեր—պետք էր, նման է՛ իմաստով:

7 Փարայով—գրամ, փող: Օրորոցից կախված հուլունքների ու մանր դրամների ճընկըլ-ճընկըլ անելը, իբրև ուրախություն բերող:

10 Լեռները բլուրներ է մենեմշին հոտը,
Թաժա է ժուռ էկեր յավրուխ հոտը:

Քընացնիմ յավրուս վարդերուն հոտուն,
Արթընցնիմ յավրուս բնլրնուլին ձանուն:

Օրոր, օրոր, օրան դընիմ՝ քընանա,
Քընանա ու հազար բարին տիրանա:

15 Տար ու բեր, տար ու բեր, հովե՛ր, տար ու բեր,
Տար ու բեր, անուշի՛կ հովեր, տար ու բեր,
Իմ աղվոր յավրուխ անուշ քընակ բեր:

Օրոր, օրոր, օրոր, օրանըդ վերնա,
Օրանըդ օր վերնա, տարիդ մեծանա:

(Պարտիզակ, Մարիամ Մինասյան)

Փովոխակ

20 Սալընջախ եմ ձըգեր,
Սալորին (կամ՝ շընարին) ծառը,
էս շեմ պառկիյ, մարիյ,
Սև հողին տակը:

(Սյուսիզ, Մամա Ֆանտազյան)

9—10 Այս, ինչպես և № 2-ի 20—21 տողերի իմաստը պարզ չէ, թերևս այդտեղ կան և վրիպակներ: Հնարավոր են հետևյալ մեկնությունները: № 2-ում՝

Լեռները բլուրներ է մենեմշին հոտը,
Թաժա եմ ժուռ էկեր յավրուխ հոտը:

Այսպիսի մեկնության օգտին խոսում է այն հանգամանքը, որ Պարտիզակի բարբառում, ինչպես նաև Սերաստիայի բարբառում, որտեղից Պարտիզակ են գաղթել առաջին 7 տնվորները, գոյություն ունեն հոտ-բույր բառի ֆունտ կամ ֆէտ հնչումները, որպիսի դեպքում ֆունտ և հետ-ը հանգավորվում են:

№ 3-ում՝

Լեռները բլուրներ է մենեմշին հոտը,
Թաժա է ժուռ էկեր յավրուխ ոտը:

Այս մեկնությունները ընդունելով, երկու դեպքում էլ ստացվում են քնքուշ և գեղեցիկ պատկերներ: